1516ին Սէլիմի բանակները չուտով յաղթահարեցին Մէմլուքները և Վրացիք ալ Երուսաղէմի մէջ քաղաքականապէս կորուսին իրենց ազդեցութիւնը։ Վրացի կղերին և ժողովրդեան անկեալ վիճակը ազդեց անոնց պատկանեալ հարստութիւններուն վրայ։ Վրաստան դադրեցուց իր նպաստները, ուխտաւորները պակսեցան և վանքերը մնացին մեծամեծ պարտքերու տակ, և չկրցին մատակարարել իրենց եկեղեցիները. 1642ին վրացի վանականները Գողգոթայէն քաշուեցան ու յանձնելով զայն կրօնակից Յոյներուն, ժամանակ մը մնացին Խաչվանքին մէջ. հոն ալ չկրցին տեղաւորուիլ և 1685ին բոլորովին լքեցին Երուսաղէմը, իրենց բերդանման հաստատութիւնները կամ ծախելով և կամ Յոյներուն յանձնելով. և ահա անոնք Սերպերու և Թրակացիներու նման չկարողացան պաշտպանել իրենց կրօնական հաստատութիւնները. ազգային յոխորտանքին վախճանն էր այս։ Մարտիրոս պատրիարք երբ հակառակ իր ջանքերուն և տաժանակիր ճամբորդութեանց՝ չկրցաւ տիրանալ Գողգոթային, Եգիպտոսի սուլթանէն ծախու կ'առնու Ս. Յարութեան տաճարին մէջ գտնուած Թագաւորաց Աղօթատեղի ըսուած Վերնատունը որ սանդուխով մը կապուած էր վարի յարկերուն հետ. և եկեղեցիի վերածելով զայն կ'անուանէ Երկրորդ Գողգոթա։ Նոյն Վերնատունը ունէր երեք կամար և երկու մեծ լուսամուտներ, որ կը նային Ս. Յարութեան դրան վրայ. Գողգոթայի փոխարէն Վերնատան եկեղեցին արքունի հրամանաւ և պետական որոշումով և վաւերաթուղթերով սեպհականութիւն եղաւ Հայոց Միաբանութեան, որ մինչև այսօր իր յատուկ առօրեայ պաշտամունքներուն և հանդիսական արարողութեանց համար կը գործածէ զայն։ Նոյն Վերնատան եկեղեցիին մէջ նորոգութիւն ըրած է նախ Գրիգոր Պարոնտէր պատրիարքը, որ Լատիններէն երեք կամար ևս առած և փոխարէն տուած է Պարտեզ ըսուած տեղւոյն վրայի կանթեղն ու այն խուցը որ կը գտնուէր Լատիններուն երգեհոնին մօտ. և Պարոնտէր այս կերպով կ'ընդարձակէ նոյն եկեղեցին։ Ապա Յովհաննէս վրդ. Երուսաղէմացին (յետոյ եպս.) օգնութեամբ Կոլոտին և Շղթայակիրին, որ տակաւին Պոլիս կը գտնուէր, նոյն տեղւոյն մէջ աւագ սեղանին դիմացը գտնուած և առաստաղէն մինչև յատակը խարսխած քարէ քառակուսի ահագին սիւնը՝ որ կը դոցէր սեղանը, մեծ աշխատութիւններով մէջտեղէն վերցնել